

**ԳԵՎՈՐԳ ՄԱԴՈՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների թեկնածու

## ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՍԱԿՆԵՐԸ

1899 թ. հասարակայնորեն նշվեց Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի հիմնադրման 25-ամյակը: Հայ մտավորականությունն ու բարերարները, ամեն մեկը յուրովի, իրենց մասնակցությունը բերեցին հայ մշակույթի այդ տարելիցին: Մուրացանը (1854-1908) այդ կապակցությամբ 152 հատոր (129 անուն) հայերեն և ռուսերեն գիրք է նվիրում ազգային ուսումնական հաստատությանը, այդ թվում՝ պարբերականներ, հանդեսներ, դասագրքեր, ժամանակակից ու դասական գրողների, ելքոպական, ռուս հեղինակների երկերի թարգմանություններ: Այդ առթիվ գրած նամակը նա ուղղել է ճեմարանի նորանշանակ տեսուչ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանին: Մյուս երեք նամակների հասցեատերը Գարեգին վարդապետ Հովսեփյանն է (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս): Այս նամակներում խոսվում է մեծ մասամբ գրողի երկերի 10-հատորյակի բաժանորդագրության մասին: Երկերի առաջին հատորը, ինչպես հայտնի է, լույս է տեսել 1903 թ., իսկ երկրորդը՝ շատ ավելի ուշ, 1909-ին: Ստորև ներակայացվող նամակները գրված են 1899-1905 թթ.: Հեղինակը տարբեր առիթներով հիշում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին, Կոմիտաս և Տիրայր վարդապետներին, Ստ. Կանայանին և ուրիշների: Նամակները բերվում են առանց որևէ միջամտության, քաղված են գրականության և արվեստի թանգարանի հայ գրողների նամակների հավաքածուց, թղթ. 185, համապատասխանաբար՝ թ. 1 – վավ. 35ա, թ. 2 – վավ. 19, թ. 3 – վավ. 14, 4 – վավ. 15:

1.

20 սեպտեմբերի 1899  
Թիֆլիս

**Առ Բարձրապատի Տեսուչն  
Ս. Էջմիածնի Գեորգեան Ժառանգաւորաց Ճեմարանի**

**Արժանապատի Հայր**

Երջանկայիշատակ Գեորգ Դ. Կաթողիկոսի յաւետ ազգօգուտ հիմնարկութիւնը – Ժառանգաւորաց Ճեմարանը՝ իրաւամբ է տօնում այսօր իւր գոյութեան քասնին-գամեայ տարեդարձը, վասն զի այդ քառորդ դարում նա ապրել է արդիւնաւոր կերպով և, չնայելով որ յաճախ շրջապատուած է եղել անհամբոյր հանգամանքներով, այնուամենայնիւ, նա տուել է ազգին բարի պտուղներ:

25 տարի ընդհանրապես չէ, բայց հայ ժողովրդի մէջ հիմնուած և նրա համար ապրող մի հասարակութեան համար՝ կարի երկար շրջան համարելու է: Եթք արժանայիշատակ Կաթողիկոսի ձեռակերտն հազիւ ուրեմն աւարտեալ՝ իրոյ ճարակ դարձաւ (ես յիշում եմ տիխութեամբ), մի համալսարանական հայ վարդապետ, որ յետոյ եպիսկոպոսացաւ, այդ լուր առնելուն պէս, ուրախութեան տօն կատարեց զա-

ւառական քաղաքներից մէկում և այդ տօնին հրաւիրեց իւր սրտակից բարեկամները: Երբ ես վրդովեալ հարցուցի՝ «Ինչո՞ւ ի հայ վարդապետը այդօրինակ չարախնդութիւն է արտայայտում մեր կրթական գործին հասած ծանր հարուածի նկատմամբ», նա պատասխանեց. «Էջմիածինը պիտի քանդուի, որովհետև այդտեղից օգուտ չէ գալու մեզ»: Եւ նա այդ ասում էր այն պատճառով, որ ինքն այդ միջոցին հրաժարեցուած էր պաշտօնից:

Այս տիսուր դէպքը ես յիշում եմ նրա համար, որ ապացուցանեմ, թէ՝ արդարև Գեղրգեան ձեմարանի 25 տարի գոյութիւն ունենալը և շահաւոր կերպով գործելը՝ այնպիսի մի ժողովրդի մէջ, որ ծնում և սնուցանում է յիշած վարդապետների նման անձինք, մի նշանաւոր երևոյթ է և անձնուէր գործունեութեան կատարեալ յաղթանակ:

Թո՞ դա ապրի, ուրեմն, ա՞յն յոյսը, որ Գեղրգեան ձեմարանի հիմունքը հաստատեց, թո՞ աձէ այն սէրը, որ այդ տաճարի պաշտօնեաների սրտում անձնուիրութեան զգացմունքը վառեց, որով և նրա քանի հինգամեայ գոյութիւնը արդիւնաւոր դարձոյց, և թող մեզ ամենիս ոգեւորէ այն հաւատը, թէ՝ Գեղրգեան ձեմարանը՝ իբրև անշիշանելի զահ՝ պիտի վառի շարունակ լուսաւորչաշէն տաճարի հովանոյն ներքոյ և լուսաւորէ հայ ժողովրդի հոգույ և մտաց անկապտելի լուսով: Եւ Բարձրելոյն Աջը, որ միակ զօրավիզն է մեզ այսօր, թող հաստատ և անխափան պահէ լուսոյ այդ տաճարը և փրկէ նրան այնպիսի փորձանքներից, որոց դէմ անկարող ենք մենք կուել...

Սատշելով ի համբոյր սուրբ Աջոյն Վեհափառ Հովանաւորողի ուսման տաճարիդ, ես ևս, հայր տեսուչ, իբրև անդամ հայ ժողովրդեան, շտապում եմ յայտնել իմ սրտագին ուրախութիւնն ու շնորհաւորանքը յարգարժան վարչութեան Գեղրգեան ձեմարանիդ և յայտարարել թէ՝ ցանկանալով գեթ մի բանով օգտաւէտ լինել վերջնոյն, ուղարկում եմ իմ կողմից ձեմարանի գրադարանին նուէր հարիւր յիսուն հատորի չափ գիրք, որոց ցուցակը, ընդ նմին և գրքերը փոխադրող ընկերութեան ընկալազքերը ներփակում եմ նամակիս մէջ:

Թէպէտ ուղարկածն նուէրը մէծ արժեք չունի, բայց և այնպէս նա կարող է մասսամբ ծառայել ձեմարանի գրադարանի ամբողջացմանը: Ուստի ինդրում եմ ընդունել այն իբրև զլումայ այրույն և զետեղել գրադարանում ի յիշատակ ձեմարանի քանի հինգամեայ տարեդարձի:

Ամենախորին յարգանօք

Մուրացան

Թղթ. 185, վաւ. 35ա

2.

6 օգոստոսի 1904, Թիֆլիս

**Բարձրապատիւ Հայր  
Գարեգին վարդապետ  
ի Գանձասար**

Յուլիս 11 թուրք Զեր պատուական նամակն, որ Աղդամից փոստ էր ձգուած սոյն ամսոյ 20-ին, ստացայ տեղու 21-ին:

Շատ ուրախ եմ որ Դուք արդէն վայելում էր Գանձասարայ մաքուր օդը, ջուրը և հիանում նրա հրաշալի տեսարաններով, որոնք երբեմն այնքան շատ սիրելի էին ինձ և այսօր էլ կարի տենչալի, բայց ցաւելով ցաւում եմ, որ չպիտի կարողանամ խոսուում կատարել: Այսօր արդէն օգոստոսի 6-ն է, և ես դեռ այրում եմ Թիֆլիսում. էլ ե՞րք կարող եմ գալ Շուշի, որ Զեր աւհալին էլ հասնեմ:

Պր. Թումանեանին էլ չեմ պատահում, կարծեմ նա Շուշաւերում է:

Յամենայն դէպս եթէ կարողացայ ելնել տեղից ամսոյ 10-ին, հետո կը վերցնեմ էստամբի թուղթ, գուցէ յաջողիմ հասնել Զեզ:

Տիրայր և Կոմիտաս Հայր սուրբերի հետ մի քանի օրով գնացինք Սանահին - շատ գոհ էի այդ ուխտագնացութեամբս: Կանայեանն էլ այնտեղ էր էստամբով արձանագրութիւններ հանում: Սանահին ինձ վրայ թողած տպաւորութիւնն էլ շատ մեծ էր, մանաւանդ նրա շրջանակներինը: Բայց Գանձասարին չի հասնիլ նա իւր հորիզոնի շրենութեամբ:

Տիրալիր ողջոյն Արժ. Անտոն վարդապետին. շնորհակալութիւն իմ կենացը խմելու համար: Պիտի աշխատեմ գալ Գանձասար և նրա պատմական եալի վրայ խմել երկուսիդ կենացները: Տեսնենք Աստուած ինչպէս է յաջողում:

Շատ զբաղուած եմ զործերով, ներողութիւն եմ խնդրում ուշ պատասխանելուս և շտապ-շտապ ու խառն գրելուս համար:

Հնդունեցէք իմ շերմագին ողջոյններս, որով մնամ միշտ  
Զեր խոնարի ծառայ

Մուրացան

Թղթ. թ. 185, վաւ. 19

3.

29 հոկտեմբերի 1904, Թիֆլիս

**Բարձրապատիւ Հայր  
Գարեգին վարդապետ  
յԵրևան**

Վաղուց է Զեզանից տեղեկութիւն չունեմ, բայց յուսամ ողջ առողջ էր և բազմամեղիս համար աղօթարար:

Զեզ դրկած 50 օրինակ գրերի վիճակը չիմացայ ինչպէս տնօրինեցիք. Զեր 17 բաժանորդներից երեքին ինքս եմ գրերը դրկել, այն է՝ օր. Զարուհուն, Յուսիկ վարդապետին և Անտոն վարդապետին: Մնացեալից էլ թէ որքան էր Դուք տեղաւորել և ո՞րքան է մնում՝ կցանկանայի իմանալ. նոյնպէս թէ ո՞րոնցից էր լրիւ ստացել բաժնեգները և որոց վրայ կայ ապառիկ: Այդ հաշիւը Դուք հեշտութեամբ կարող էր պարզել, ըստ որում Զեզ մօս են գտնուում անդորրագրերի արմատները: Թէպէտ մի ցուցակ ստացած եմ Զեզանից, բայց կուզենայի մի լրացուցիչ ցուցակ էլ ունենալ: Գուցէ նոր բաժանորդներ էլ ունեք, որոնք չեն մտած հին ցուցակը:

Արժ. Վահան աւագ քահանայ Վաչէեանց Երևանից գրած և խնդրած էր ինձ՝ ուղարկել իրեն նույը իմ երկասիրութիւններից մի օրինակ, առարկելով թէ՝ իւր տանն ունի փոքրիկ գրադարան, որից օգտում են այն աշակերտներն ու աշակերտուիիներն, որոնք հասարակաց ընթերցարան յաճախել չեն կարողանում, իսկ ինքը միջոց չունի ամեն զիրք փողով առնելու: Եթէ ճիշտ է, խնդրեմ հաճիք ուղարկել նրան մի օրինակ: Ես յիշեալ քահանային ճանաչելու պատիւր չունեմ, բայց եթէ նա իրօք միջնորդ է հանդիսանում հայ ընթերցանութիւն տարածելու, մեր պարտքն է օգնել նրան:

Ուրիշ կարևոր հաղորդելիք չունենալով՝ մնամ սրտագին ողջոյններով

Զեր բարձր Արժանապատութեան

Խոնարհ ծառայ

Մուրացան

Իմ հասցեն՝ Ռտիշեական 15 Մուրացան.

#### 4.

25 յունուարի 1905, Թիֆլիս

**Բարձրապատիւ Հայր**

**Գարեգին վարդապետ**

(Երևան, թեմական դպրոց)

Ամսոյս 20 թուվ գրած Զեր պատուական նամակը – ներփակեալ յիսուն ոութլոյ հետ ստացայ, որի համար յայտնում եմ սրտագին շնորհակալութիւնս:

Այդ գումարը արձանագրեցի Զեր Արժանապատութեամբ բացած հաշի պահանջ, որով Զեզ դրկուած անդորրագրերի ու զրբերի դիմաց ստացած եղանակից 125 ոութլի:

Որ հաշի չէր ուղարկում, իոզ չէ, միայն թէ, ժամանակ ունեցած միջոցին, հաճեցէր դրկել ինձ Զեր գտած բոլոր բաժանորդների ցուցակը, որպէսզի չարձանագրուածները մատեանի մէջ արձանագրեմ և ապագայի համար ոչինչ չմոռացուի: Ընկալագրերն էր խնդրում. այս երկու օրը կուղարկեմ սիրով և ընդնմին կանխաւ իմ զերմագին շնորհակալութիւնը Զեզ մատուցանելով ընդունեցէր, սիրելի Հայր, իմ սրտագին յարգանքը, որով մնամ միշտ

Զեր խոնարհ ծառայ

Մուրացան

3. Գ. Երկրորդ հատորս յոյս ունեմ շուտով աւարտել: Գրաքննիչի կողմից մէջ բերած մի կնճիռ որոշ ժամանակ խլեց ինձանից: